



Կալիֆորնիա նահանգի հաշմանդամների
պաշտպանության և շահերի ներկայացման
համակարգ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746

Միանվագ վճարումներ և Medi-Cal-ի իրավունսակություն

Հունիս 2018թ., Հրատ. #5613.10 - Armenian

**Նշում. Սույն հրապարակումը պարունակում է միայն
ընդհանուր տեղեկատվություն: Յուրաքանչյուրի
իրավիճակը տարբեր է: Ձեր առանձին իրավիճակի
վերաբերյալ խորհուրդ ստանալու համար խորհրդակցե՛ք այս
հարցերում իրազեկ որևէ փաստաբանի կամ
իրավախորհրդատուի հետ:**

Շատ մարդիկ ունեն հարցեր այն մասին, թե չկրկնվող միանվագ
(միանգամյա) վճարումն ինչպես կարող է ազդել Medi-Cal-ի իրենց
իրավունսակության վրա: Սույն հրապարակումը նկարագրում է, թե
ինչպես են միանվագ վճարումներն ազդում տարեցների և
հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որոշ Medi-
Cal ծրագրերի իրավունսակության վրա: Այն բացատրում է, թե ինչ է
տեղի ունենում ձեր Medi-Cal-ի հետ, երբ դուք ստանում եք միանգամյա
կամ միանվագ վճարում, և երբ և արդյոք չծախսված միանվագ
վճարումը դիտարկվում է որպես ռեսուրս հաջորդ ամսվա համար:

Այս հրապարակման մեջ չի խոսվի այլ խմբերին, օրինակ՝ հղի կանանց
համար առաջարկվող Medi-Cal ծրագրերի կամ CALWORKS-ի հետ
կապված Medi-Cal-ի մասին:¹ Այն նաև չի ներկայացնի

¹ Տե՛ս Առողջապահության վարչության All-County Welfare Directors'
Letter (ACWDL) No. 92-03. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

տեղեկատվություն SSI-ի հետ կապված Medi-Cal-ի և այլ Medi-Cal ծրագրերի մասին, որոնք միանվագ վճարումները դիտարկում են այնպիսին, ինչպիսին SSI ծրագիրն է:²Վերջինիս համար տե՛ս SSI միանվագ վճարումների մասին մեր հրապարակումը հետևյալ հղմամբ՝ [Միանվագ վճարումներ և SSI-ի իրավունակություն](#)

Մատչելի բուժօգնության մասին օրենքն ընդլայնել է այն մարդկանց թիվը, ովքեր կարող են ստանալ Medi-Cal Փոփոխված և ճշգրտված համախառն եկամտի (անգլ.՝ Modified Adjusted Gross Income, MAGI) հաշվարկմամբ Medi-Cal ծրագրով: Ինչպես ստորև քննարկված մյուս Medi-Cal ծրագրերի դեպքում, այս ծրագիրը ևս ունի Medi-Cal-ի իրավունակության իր սեփական չափորոշիչներն ու կանոններն այն բանի վերաբերյալ, թե ինչպես է այն դիտարկում միանվագ վճարումները: Այս հարցը մենք կքննարկենք 13-րդ կետում՝ ստորև:³

Ի՞նչ է չկրկնվող միանվագ վճարումը:

² Այս ծրագրերը համարվում են SSI-ին կապված Medi-Cal, բաժին 1619(b), Pickle, Հաշմանդամություն ունեցող տարեցի երեխա (DAC) և Medicaid ստացողի այրի կին/այրի ամուսին կամ ամուսնալուծված ամուսին կամ կին: Տե՛ս օր. Առողջապահության վարչության All-County Welfare Directors' Letter (ACWDL) թիվ 09-61 և 09-62, U.S.C. օրենքի բաժին 42, § 404(e), (f), U.S.C. օրենքի բաժին 42, § 1383(c), (d): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

³ MAGI Medi-Cal-ի մասին մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [«Ի՞նչ է տարեցների ծրագրի ընդլայնումը/ MAGA Medi-Cal ծրագիրը:»](#) վերնագրով մեր հրապարակումը, տե՛ս նաև Օրենքի և գույքի պաշտպանության արևմտյան կենտրոնի 2016թ. մարտ ամսվա ձեռնարկը «Բժշկական ապահովագրության ծածկույթի ստացումը և պահպանումը ցածր եկամուտ ունեցող կալիֆորնիացիների համար» վերնագրով, որը հասանելի է 2018թ. մայիսի 22-ից, [Բժշկական ապահովագրության ծածկույթի ստացումը և պահպանումը ցածր եկամուտ ունեցող կալիֆորնիացիների համար](#): –(Վերադառնալ [հիմնական փաստաթղթին](#))

Չկրկնվող միանվագ վճարումը միանգամյա վճարվող նպաստ է կամ ցանկացած այլ կանխիկ գումար կամ գույք, որը կարող է վերածվել կանխիկի՝ սնունդ կամ կացարան ունենալու համար: Այն չի ներառում այն գումարը, որը դուք սովորաբար ստանում եք ամսվա համար:⁴Օրինակ՝ այն չի ներառում ձեր ամսական սոցիալական ապահովության նպաստի չեքը, սակայն կարող է ներառել նպաստի գերավճարի հետ վճարման չեքը:

Դուք ասացիք, որ այս հրապարակումը կիրառելի է միայն տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որոշակի Medi-Cal ծրագրերի համար: Ո՞րոնք են դրանք:

Դրանք են.

- Տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց աղքատության նվազեցման դաշնային ծրագիրը (անգլ.՝ Aged and Disabled Federal Poverty Level Program, A&D FPL)⁵,
- Հաշմանդամություն ունեցող աշխատող անձանց ծրագիրը ⁶,
և

⁴C.F.R. օրենքի բաժին 22, § 50064.5 - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵ Տե՛ս Հաշմանդամության նպաստներ 101, [«Medi-Cal. Մանրամասն նկարագրություն»](#), հասանելի է 2018թ. մայիսի 22-ից, - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁶ Տե՛ս Հաշմանդամության նպաստներ 101, [«Medi-Cal. Մանրամասն նկարագրություն»](#), հասանելի է 2018թ. մայիսի 22-ից, - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

- Տարեց, կույր և հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական կարիքների ծրագիրը (անգլ.՝ Aged, Blind & Disabled Medically Needy, ABD-MN)⁷:

Ի՞նչպես պարզեմ, թե ես որ Medi-Cal ծրագրում եմ ընդգրկված:

Յուրաքանչյուր Medi-Cal ծրագրին հատկացված է նպաստի կոդ: Ձեր նպաստի կոդը կարող եք հարցնել ձեր վարչաշրջանի Medi-Cal-ի իրավունսակության հարցերով զբաղվող աշխատակցից: Կամ դեղատոմս այցելելիս՝ ինդրեք, որ ձեր Medi-Cal-ի քարտը, որը կոչվում է BIC կամ «Շահառուի նույնականացման քարտ (անգլ.՝ Beneficiary Identification Card)», անցկացնեն սարքի միջով, որպեսզի ձեզ հայտնեն ձեր նպաստի կոդը կամ կոդերը:⁸

Ի՞նչու՞ է կարևոր այն, որ ես ստանում եմ միանվագ վճարում:

Յուրաքանչյուր Medi-Cal ծրագիր ունի իրավունսակության սահմանման իր սեփական չափորոշիչները, այդ թվում՝ եկամտի և ռեսուրսների համապատասխանության կանոնները: Ստացվող եկամտի դեպքում (որոշակի Medi-Cal ծրագրի համար թույլատրելի նվազեցումներից հետո) դուք կարող եք կորցնել տվյալ ծրագրի իրավունսակությունը և տեղափոխվել ABD-MN ծրագրի ծախսային համավճարով:

⁷ Տե՛ս Հաշմանդամության նպաստներ 101, [«Medi-Cal. Մանրամասն նկարագրություն»](#), հասանելի է 2018թ. մայիսի 22-ից, - ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

⁸ Նպաստների կոդերի ցանկը տե՛ս Առողջապահության վարչության նպաստների կոդերի գլխավոր աղյուսակում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

Ինչ վերաբերում է ռեսուրսներին, կրկին կախված է այն բանից, թե որ Medi-Cal ծրագրում եք դուք: Շատ ծրագրեր թույլատրում են ամսվա մեջ որևէ ժամանակահատվածի ընթացքում ունենալ \$2,000-ից ավելի ընդհանուր չնվազեցված հաշվելի ռեսուրսներ մեկ անձի համար և \$3,000 ամուսնական զույգի համար:⁹ Ընտանիքի յուրաքանչյուր լրացուցիչ անդամի համար միայն Medi-Cal-ի ծրագրերն ունեն ռեսուրսների ավելի բարձր սահմանափակում:¹⁰ Դա նշանակում է, որ եթե դուք ստանում եք հաշվելի եկամուտ, որը դառնալու է հաշվելի ռեսուրս հաջորդ ամսվա համար, ապա դուք պետք է նվազեցնեք գումարը մինչև \$2,000 (\$3,000) հաշվելի ռեսուրսի մակարդակը մինչև հաջորդ ամսվա վերջը, որպեսզի պահպանեք Medi-Cal-ի ձեր իրավունակությունը: Սակայն դուք կարող եք հետադարձ կերպով վերականգնել Medi-Cal-ի իրավունակությունը տվյալ ամսվա առաջին օրվա դրությամբ, եթե ձեր ռեսուրսները նվազեցնեք մինչև տվյալ ամսվա վերջը:¹¹

⁹ C.F.R օրենքի բաժին 20, § 416.202(d), 22 C.C.R §§ 50420(a), 50195(c)(2), Տե՛ս նաև [Կալիֆորնիայի Առողջապահության և հումանիտար ծառայությունների գործակալության «Հիմնական գույքային սահմանափակումները Medi-Cal-ում»](#) հրապարակումը, Էջ 1, 2014թ. ապրիլ, հասանելի է 2018թ. մայիսի 23-ից: - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁰ 22 C.C.R § 50420(a). - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹¹ Դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող ամիսների ապահովագրությունը կարող է վճարվել անգամ այն դեպքում, եթե ռեսուրսակտիվ ամսում առկա են եղել ավել չափով ռեսուրսներ, եթե սահմանաչափը գերազանցող ռեսուրսների գումարն օգտագործվել է բժշկական ծախսերի վճարման համար: [Կալիֆորնիայի Առողջապահության և հումանիտար ծառայությունների գործակալության «Հիմնական գույքային սահմանափակումները Medi-Cal-ում»](#), Էջ 2-3, 2014թ. ապրիլ, հասանելի է 2018թ. մայիսի 23-ից, տե՛ս նաև ACWDL No. 97-41, որն իրականացնում է Պրինսիպին ընդդեմ Բելչի գործը: - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Ո՞րն է եկամտի և ռեսուրսների (գույքի) տարբերությունը:

Ընդհանուր առմամբ, եկամուտը լինում է գումարի կամ անկանխիկ օգնության տեսքով,¹² որը դուք ստանում եք որևէ ամսվա ընթացքում՝ ձեր սննդի և կացարանի կարիքները բավարարելու համար:¹³ Եկամուտը կարող է լինել աշխատած¹⁴ կամ չաշխատած:¹⁵ Եվ հաշվի են առնվում միայն առկա եկամուտը կամ ռեսուրսները:¹⁶

Մեկ ուրիշի կողմից ուղղակիորեն վճարված իրերն ու ծառայությունները, որոնք չեն համարվում անկանխիկ եկամուտ սննդի կամ կացարանի կարիքների համար, չեն հաշվվում որպես եկամուտ:¹⁷ Այնպես որ հետևյալ տեսակի նվիրատվությունները չեն ազդի Medi-Cal-ի նպատակով դիտարկվող ձեր հաշվվելի եկամտի վրա: Սննդից բացի այլ կենցաղային իրեր (թղթե ապրանքներ, մաքրության և լվացքի

¹² «Անկանխիկ» օգնություն նշանակում է ոչ դրամական օգնություն, որը հոգում է ձեր կացարանային, կոմունալ ծառայությունների կամ սննդի կարիքները դրամի փոխարեն: Ի տարբերություն SSI-ի՝ Medi-Cal ծրագրում հաշվվում է միայն անկանխիկ օգնությունը, եթե այն հոգում է ձեր բոլոր կացարանային կամ կոմունալ ծառայությունների կամ սննդի կարիքները որևէ ամսվա համար: 22 C.C.R § 50420(a). - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹³ Ապահովության մասին Օրենքի § 14006(c), C.F.R օրենքի բաժին 42, § 435.601, C.C.R օրենքի բաժին 22, § 50451. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁴ 22 C.C.R § 50503. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁵ 22 C.C.R § 50507. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁶ 22 C.C.R. §§ 50501(b), 50513 («հասանելի եկամուտ»), 50515 (սահմանում է «անհասանելի եկամուտը»). - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁷ 20 CFR § 416.1103(g). - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

պարագաներ), տնային կենդանիների կեր և խնամքի պարագաներ, հեռախոսային հաշիվներ, ինտերնետի և մալուխային գծերի վճարներ, տաքսիի չեքեր, բակի մաքրում, ամսագրերի կամ թերթերի բաժանորդագրություններ.

Սովորաբար կանխիկ են համարվում ռեսուրսները (կամ գույքը)¹⁸ կամ ձեր սեփականությունը հանդիսացող այլ իրերը, օրինակ՝ տունը, արժեթղթերը, բանկային հաշիվները կամ անշարժ գույքը, որոնք կարող եք վաճառել կամ վերածել կանխիկի:¹⁹

Հաշվելի եկամուտը (թույլատրելի նվազեցումներից հետո) և ռեսուրսներն օգտագործվում են Medi-Cal-ի համար ձեր իրավունակությունը սահմանելու համար: Ազատված եկամուտը և ռեսուրսները չեն օգտագործվում Medi-Cal-ի համար ձեր իրավունակությունը սահմանելու նպատակով:²⁰

Որո՞նք են համարվում ազատված եկամուտ և ռեսուրսներ:

Որոշ բաներ ընդհանրապես չեն հաշվվում որպես եկամուտ կամ ռեսուրս: Օրինակ՝ դաշնային, նահանգային կամ տեղական կառավարությունների կողմից աղետի հետևանքների մեղմացման կամ

¹⁸ SSI ծրագիրն օգտագործում է «ռեսուրսներ» տերմինը սա նկարագրելու համար, իսկ միայն Medi-Cal-ով ծրագրերն օգտագործում են «գույք» տերմինը այս նույն բանը նկարագրելու համար: Այս հրապարակման բոլոր հատվածներում մենք կօգտագործենք «ռեսուրս» տերմինը.” - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁹ 22 C.C.R §§ 50073, 50074. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁰ 22 C.C.R §§ 50418, 50521. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

տեղափոխության համար հատկացված օգնությունը:²¹ Մեկ այլ օրինակ են հնդկացի ցեղերի համար նախատեսված որոշ հիմնադրամներից ստացած միջոցները:²² Ազատվում են նաև որոշ հարկային արտոնությունները,²³ օրինակ՝ Աշխատած եկամտի հարկային արտոնությունները (անգլ.՝ Earned Income Tax Credits, EITCs)²⁴: Դուք կարող եք փնտրել Medi-Cal-ի իրավունսակությանը համապատասխանող չհաշվվող եկամուտների ցանկը, որոնք կարևոր են այն ծրագրերի համար, որոնցում իրավունսակությունը որոշվում է տարիքի կամ հաշմանդամության հիման վրա՝ C.C.R. օրենքի բաժին 22-ի. §§ 50523-50544. Այստեղ ներառված է SSI ծրագրով չհաշվվող ռեսուրսների ցանկը, որոնք չեն հաշվվում նաև տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված Medi-Cal ծրագրերով. [POMS SI 01110.210](#).

Ես պատրաստվում եմ ստանալ միանվագ վճարում: Ինչպե՞ս կազդի դա իմ Medi-Cal-ի վրա:

Դա կախված է այն բանից, թե ինչ տիպի վճարում եք պատրաստվում ստանալ:

²¹ C.F.R. օրենքի բաժին 22, § 50535.5 - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²² 22 C.C.R § 50537. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²³ Տե՛ս նաև C.C.R օրենքի բաժին 22, §§ 50454.5, 50523.5. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁴ Ազատվում է ստացած ամսվա համար. C.C.R օրենքի բաժին 22, § 50523.5: Ազատվում է ստացած ամսվան հաջորդող ամսվա համար. 22 C.C.R § 50449(a). - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Սոցիալական ապահովության կամ SSI հետադարձ վճարումներ

Սոցիալական ապահովության ոչ բոլոր վճարումներն են համարվում կանոնավոր SSI վճարում, կամ հաշմանդամության համար կամ թոշակառուներին տրամադրվող սոցիալական ապահովության ամսական նպաստի (անգլ.՝ Disability or Retirement Insurance Benefit, DIB կամ RIB) գումարը համարվում է հետադարձ վճարում և դիտարկվում է որպես ազատված եկամուտ այն ստանալու ամսվա համար և դրանից հետո ինը ամսվա ընթացքում չի հաշվարկվում որպես ձեր գույքի պահուստ:²⁵

IHSS վճարումներ

Հետադարձ IHSS նպաստի օրինակները ներառում են այն գումարները, որոնք դուք ստանում եք.

- Եթե դիմում եք IHSS-ի համար, և ձեր իրավունակությունը հաստատվում է, սակայն ձեր ծառայությունն մատուցողի վճարումները (կամ ձեր վճարումները, եթե դուք համապատասխանում եք կանխավճարային վճարման համար) դեռևս չեն սկսվում, ²⁶ կամ

²⁵ C.C.R օրենքի բաժին 22-ի § 50455-ը ցույց է տալիս, որ ազատման ժամանակաշրջանը վեց ամիս է, սակայն տե՛ս [Կալիֆորնիայի Առողջապահության և հոլմանիտար ծառայությունների գործակալության Բուժօգնության ծառայությունների վարչության նամակը առ 28-րդ դեկտեմբերի 2009թ., հասանելի է 2018թ. մայիսի 23-ից: -\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²⁶ Եթե դուք համապատասխանում եք IHSS/Medi-Cal-ի անձնական ինսամքի ծառայությունների համար որպես մեկը, ով համապատասխանում է ծանր հաշմանդամություն ունեցող անձի սահմանմանը, և դուք կամ ձեր ներկայացուցիչը ի վիճակի եք վարել վճարումները կատարելու և անմիջապես ձեր ծառայությունների մատակարարին կատարվող վճարումներին հետևելու գործընթացը, ապա դուք իրավունք ունեք ստանալ գումարն ամսվա առաջին օրը, որպեսզի վճարեք ձեր ծառայությունների մատակարարներին

- Եթե դուք բողոքարկում եք թույլատրված ժամերի քանակը և շահում եք, քանի որ անկողմնակալ լսումների արդյունքում եզրակացվել է, որ վարչաշրջանի սոցիալական աշխատողը չի թույլատրել ձեզ անհրաժեշտ բոլոր ժամերը:

IHSS վճարումներ անհրավունակ ամուսնական զույգերին կամ անհրավունակ ծնողներին

«Անհրավունակ» ծնող կամ ամուսնական զույգ նշանակում է, որ նրանք չեն ստանում Medi-Cal-ի նպաստներ: Իրենց անչափահաս երեխային կամ ամուսնուհ/կնոջը ծառայություններ մատուցող անհրավունակ ծնողին կամ զույգին վճարված IHSS-ի հետադարձ միանվագ վճարը համարվում է ազատված եկամուտ, այլ կերպ ասած՝ այն չի դիտարկվում կամ չի հաշվվում իրավունակ երեխայի կամ ամուսնուհ/կնոջ համար և հետևաբար՝ չի ազդում շահառու երեխայի կամ ամուսնուհ/կնոջ իրավունակության վրա:²⁷

Հիշե՛ք. եկամուտը դառնում է ռեսուրս այն ստացած ամսվան հաջորդող ամսվա համար, հետևաբար անհրավունակ ծնողին կամ զույգին վճարված IHSS-ի հետադարձ միանվագ վճարը համարվում է հանված ռեսուրս ստացած ամսվան հաջորդող ամսվա համար:²⁸ Ինչևէ, այն հաշվվում է որպես ռեսուրս ստացումից հետո երկրորդ օրացուցային ամսվա համար և կհաշվվի երեխայի կամ ամուսնուհ/կնոջ համար, եթե

ուղղակիորեն: Ապահովության մասին օրենքի § 12304(a):
Կանխավճարը համարվում է ազատված եկամուտ: 20 C.F.R.

§ 416.1103(b)(3)(ii). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²⁷ 22 C.C.R. § 50527. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²⁸ 22 C.C.R. § 50451. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

դա եղել է IHSS-ի հետադարձ միանվագ վճարում:²⁹ Օրինակ, եթե IHSS-ի հետադարձ վճարումը կատարվել է անհրավունակ ամուսնուն/կնոջը հունվար ամսում, ապա վճարումը կդիտարկվի որպես ազատված ռեսուրս փետրվար ամսվա համար, սակայն հաշվելի ռեսուրս մարտ ամսվա համար թե՛ SSI-ի, թե՛ Medi-Cal-ի գծով:

Եթե անհրավունակ ամուսինը/կինը կամ ծնողն ստանում է վճարում տնային օժանդակող ծառայությունների համար, որոնք մատուցվել են ոչ նրա իրավունակ ամուսնուն/կնոջն կամ ոչ իրավունակ երեխային, ապա վճարումները ներառվում են եկամտում, որը ենթակա է դիտարկման:³⁰

IHSS վճարումներ շահառուին

Որպես IHSS-ի շահառուի ձեզ կատարված IHSS-ի հետադարձ վճարումները կդիտվեն որպես ազատված եկամուտ ստացած ամսվա համար և ազատված ռեսուրս հաջորդ ամսվա համար: Դրանից հետո, չճախսվելու դեպքում, գումարը կդառնա հաշվվելի ռեսուրս:³¹

²⁹ 20 C.F.R. § 416.1201(a)(3); P.O.M.S. SI 01120.112(B)(1), [հասանելի է հետևյալ հղումով՝ SI 1120.112 Տնային օժանդակող ծառայությունների հետադարձ վճարումներ անհրավունակ ամուսնական զույգերին և ծնողներին](#). – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

³⁰ Տե՛ս [P.O.M.S. SI 01320.175](#). – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

³¹ CFR օրենքի բաժին 20, §§ 416.1103(b), 416.1201(a)(3), 416.1161(a)(16), տե՛ս [SI 1120.112 Տնային օժանդակող ծառայությունների հետադարձ վճարումներ անհրավունակ ամուսնական զույգերին և ծնողներին](#): – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

Սոցիալական ապահովագրության չկրկնվող միանվագ վճարումներ

Սոցիալական ապահովագրության չկրկնվող միանվագ վճարումներ, օրինակ երկաթուղայինների թոշակի անցնելու նպաստները, վետերանների նպաստները, աշխատողների աշխատավարձերը և հաշմանդամության ապահովագրական նպաստները համարվում են որպես հաշվվելի ռեսուրս դրանք ստանալու ամսվա համար:³² Դրանք չեն ազդի Medi-Cal-ի իրավունակության վրա, եթե ձեր ընդհանուր հաշվվելի ռեսուրսները չգերազանցեն \$2,000-ը վճարումն ստանալու ամսվա ընթացքում որևէ պահի:³³

Եկամտի կամ ռեսուրսի փոխանակում

Ձեր ստացած որոշ բաներ արդեն մեկ անգամ հաշվվել են որպես եկամուտ այս կամ այն տեսքով: Կրկնակի հաշվումից խուսափելու համար դրանք չեն հաշվվում որպես եկամուտ: Օրինակ՝ եկամտից նվազեցվում են հարկային փոխհատուցումները:³⁴ Բացի այդ, ձեր ստացած որոշ բաներ եկամուտ չեն, սակայն ռեսուրս են: Օրինակ՝ վաճառքից ստացած հասույթը, ռեսուրսի փոխանակումը կամ փոխարինումը (օրինակ ավտոմեքենայի վաճառքը) եկամուտ չեն, սակայն ռեսուրս են:³⁵

³² 22 C.C.R §§ 50455, 50507. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³³ C.C.R օրենքի բաժին 22, § 50420, [Կալիֆորնիայի Առողջապահության և հումանիտար ծառայությունների գործակալության «Հիմնական գույքային սահմանափակումներ Medi-Cal-ի համար» հրապարակումը, 2014թ. ապրիլ, հասանելի է 2018թ. մայիսի 23-ից, Էջ 1: -](#)([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁴ 22 C.C.R § 50523.5. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁵ 22 C.C.R §§ 50406, 50407. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

Եթե դուք ստանում եք կանխիկ գումար որևէ նվազեցված ռեսուրս վերանորոգելու կամ փոխարինելու նպատակով, օրինակ ձեր տունը, որը կորցրել եք, տուժել է կամ գողացել են, ապա կանխիկ գումարն ստանալու պահից սկսած դուք ունեք 9 ամիս ռեսուրսը վերանորոգելու կամ փոխարինելու համար:³⁶ Այդ ժամկետը կարող է երկարաձգվել ևս 9 ամսով, եթե դրա համար հիմնավոր պատճառ ցույց տաք:³⁷ Հակառակ դեպքում, կանխիկ գումարը կդառնա հաշվելի ռեսուրս:³⁸ Կանխիկ գումարը դառնում է հաշվելի ռեսուրս նաև այն դեպքում, եթե դուք փոխում եք գույքը վերանորոգելու կամ փոխարինելու ձեր մտադրությունը:³⁹

Մնացած բոլոր միանվագ վճարումները

Եթե դուք պատրաստվում եք ստանալ ցանկացած տեսակի միանվագ վճարում (օրինակ ժառանգություն, նվիրատվություն, կյանքի ապահովագրության վճարում կամ աշխատանքային պարգևավճար), այն կհամարվի հաշվելի եկամուտ ստացած ամսվա համար և հաշվելի ռեսուրս հաջորդ ամսվա համար:⁴⁰

³⁶ 20 C.F.R. § 416.1232(a). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁷ 20 C.F.R. § 416.1232(b). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁸ 20 C.F.R § 416.1232(a). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁹ 20 C.F.R § 416.1232(d). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁴⁰ 20 C.F.R §§ 416.1104 (SSI counted income), 416.1120 (SSI unearned income), 416.1207 (SSI resource determinations); 22 C.C.R §§ 50451, 50455 (Medi-Cal Lump Sum Payments); see also [P.O.M.S. SI 00810.410 Ոչ մշտական անկանոն եկամտի նվազեցումը](#). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Ի՞նչ է տեղի ունենում, եթե որևէ մեկն ինձ տալիս է օդանավի տոմս: Ավտոմեքենա՞: Տու՞ն: Դրա՞մ դպրոց հաճախելու համար:

Եթե ձեզ տրամադրել են անկանխիկ նվիրատվությունն որևէ բանի համար, որը կորակվի որպես ռեսուրս, եթե այն պահեք, ապա նվիրատվությունը չի հաշվվում որպես եկամուտ կամ ռեսուրս, եթե պահեք այն:⁴¹

Ներքին թռիչքների տոմսը, որը տրվել է որպես նվիրատվություն, չի հաշվվում որպես եկամուտ կամ ռեսուրս, եթե այն չի կանխիկացվել կամ վաճառվել:⁴² *Կանխիկացվելու կամ վաճառվելու դեպքում ստացված դրամը դիտվում է որպես եկամուտ կանխիկացման կամ վաճառքի ամսվա համար: Ներքին թռիչքների համար որպես նվիրատվություն տրված օդանավի տոմսը հաշվվում է որպես եկամուտ կամ ռեսուրս, եթե այն պահում եք հաջորդ ամսվա համար: Սակայն եթե ներքին թռիչքների համար տրված տոմսը հնարավոր չէ կանխիկացնել կամ վաճառել դրամով, որը տրվելու է ձեզ, ապա այն չի հաշվվում որպես եկամուտ կամ չի դիտարկվում որպես ռեսուրս, քանի որ տոմսի արժեքը հնարավոր չէ վճարել սննդի կամ կացարանի դիմաց:*

Ավտոմեքենայի նվիրատվությունը չի դիտարկվի որպես եկամուտ դրանք ստացված ամսվա համար, եթե դուք չունեք ավտոմեքենա, սակայն կդիտարկվի որպես ազատված ռեսուրս՝ սկսած հաջորդ

⁴¹C.F.R. օրենքի բաժին 42, § 416.1103(j). “Ցանկացած բան, որ դուք ստանում եք (բացի ոչ որպես նվիրատվություն տրված կացարանից, ինչպես սահմանվում է § 416.1130-ում կամ սննդից) և որը կնվազեցվի որպես ռեսուրս, ... եթե պահեք այն, չի համարվում եկամուտ.” –

[\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴²U.S.C. օրենքի բաժին 42, § 1382a (b)(15), CFR օրենքի բաժին 20, §§ 416.1124(c)(16), 416.1161(a)(19): Ինչպես սահմանված է կանոնակարգում, «ներքին ճամփորդություններ» են համարվում ԱՄՆ-ի տարածքում իրականացվող ճամփորդությունները, օրինակ՝ դեպի Վիրջինյան կղզիներ. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

ամսից:⁴³Դա այն պատճառով է, որ եթե դուք որևէ բան եք ստանում, որը կարող է հաշվվել որպես ազատված ռեսուրս հաջորդ ամսվա համար, ապա այն կհաշվվի որպես եկամուտ ստացած ամսվա համար: Եթե ավտոմեքենան լինի երկրորդ ավտոմեքենա, և երկրորդ ավտոմեքենան չհամարվի ազատված ռեսուրս, քանի որ դուք այն օգտագործում եք աշխատանքում ըստ ACWDL No. 91-28-ի, ապա դա կհաշվվի որպես անկանխիկ եկամուտ այն չափով, որ չափով որ դրա արժեքը գերազանցել է ձեր ռեսուրսների արժեքային շեմը:

Տան նվիրատվությունը կամ կոնդոմինիումումը կամ այլ տիպի կացարանը, այդ թվում՝ վագոն-տնակը, որը դուք օգտագործելու եք որպես տուն, ըստ SSI-ի ենթադրվող առավելագույն արժեքի (անգլ.՝ presumed maximum value, PMV) հաշվարկման կանոնների, կհամարվի որպես անկանխիկ եկամուտ այն ստացած ամսվա համար:⁴⁴ Հաջորդող ամիսների համար տունը կդիտարկվի որպես ազատված ռեսուրս: Ըստ Medi-Cal-ի կանոնների՝ մեկ անձի տնտեսության համար անկանխիկ եկամտի արժեքի առավելագույն շեմը սահմանվում է \$111, իսկ երկու անձից բաղկացած տնտեսության համար՝ \$150:⁴⁵ Եթե դուք որպես նվիրատվություն ստանում եք տուն, որը չեք օգտագործելու ձեր բնակության համար, ապա այդ տունը վաճառելու դեպքում վաճառքի ծախսերը կամ տունը վաճառքի համար նախապատրաստելու ծախսերը նվազեցնելուց հետո ձեր ստացած գումարը համարվելու է եկամուտ: Երբեմն տունը համարվում է անհասանելի, քանի որ այն հնարավոր չէ

⁴³Բացառություն մեկ ավտոմեքենայի համար՝ 22 CCR § 50461; 20 C.F.R. § 416.1218. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴⁴C.C.R օրենքի բաժին 20, §§ 416.1140, 416.1141: Ենթադրյալ առավելագույն արժեքի կանոնով հաշվարկելու արդյունքում վերագրված անկանխիկ եկամտի գումարը կազմում է Դաշնային նպաստի դրույքաչափի 1/3-ը՝ գումարած ընդհանուր բոլոր եկամուտներից նվազեցվող \$20-ը: 2018թ.-ին այդ գումարը կազմում է \$260. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴⁵C.C.R օրենքի բաժին 22, §§ 50455, 50507: 50511(a)(2), (d)(1)(A)-(B). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

վաճառել տվյալ տանը բնակվող այլ սեփականատերերին խնդիրներ⁴⁶ չպատճառելու համար կամ այլ պատճառներով:⁴⁷ Կամ տունն անհասանելի է, քանի որ Medi-Cal-ի շահառուն չունի տունը վաճառելու օրենքով սահմանված իրավունք, կամ տան վաճառքը կարող է դատական գործի հանգեցնել:

Կրթություն ստանալու նպատակով տրված դրամական նվիրատվությունը կամ ցանկացած այլ աղբյուրից ստացված դրամական միջոցները, օրինակ դրամաշնորհները, կրթաթոշակները և այլն, որոնց օգտագործումը սահմանափակվում է ուսման ծախսերով, օրինակ գրքեր, վճարներ, ուսման վարձ, դասախոսի վարձատրություն և այլն, համարվում են ազատված ռեսուրս ստացման ամսվան հաջորդող ինը ամիսների համար և հետևաբար չեն դիտարկվում որպես եկամուտ ստացած ամսվա համար:

Չաշմանդամության համար տրվող սոցիալական ապահովության իմ բոլոր նպաստների գումարը կազմում է \$1200, և ես համապատասխանում եմ առանց ծախսային մասնաբաժնի Medi-Cal ծրագրին՝ ըստ Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աղքատության նվազեցման դաշնային ծրագրի: Իմ հորաքրոջից ես հենց նոր ստացա \$100 իմ ծննդյան կապակցությամբ: Ես վախենում եմ, որ դա կազդի Medi-Cal-ի իմ իրավունակության վրա այս ամսվա համար:

Չիմնվելով միայն ձեր SSDI եկամտի վրա՝ ձեր հաշվելի եկամուտը կազմում է ամսական \$1180 (\$1200-ից հանած \$20, որը պահվում է ցանկացած եկամտից⁴⁸), որը ցածր է A&D FPL 2018 ծրագրով մեկ անձի համար սահմանվող ամսական \$1242 եկամտային շեմից: Քանի որ ձեր հորաքրոջից ստացած նվերը համարվում է ոչ կանոնավոր կամ ոչ

⁴⁶ Տե՛ս [POMS SI 1130.130](#). – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

⁴⁷ 22 C.C.R. § 50402, [POMS SI 1120.010](#), [POMS SI 01120.010](#). – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

⁴⁸ 22 CCR § 50549.2. – (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

հաճախակի չաշխատած եկամուտ ըստ CCR օրենքի բաժին 22-ի, § 50542(a)-ի, որովհետև դա մեկ եռամսայկում երկու անգամից ոչ ավել ստացած եկամուտ է, և այդ եկամուտը չի կարող ողջամտորեն կանխատեսվել, ապա առաջին \$60-ը համարվում է ազատված գումար: Յետևաբար միայն նվերի \$40-ն է հաշվվում, և այդ պատճառով ձեր հաշվելի եկամուտը կկազմի \$1220, որն այնուամենայնիվ ցածր է 2018թ. եկամտային շեմից:⁴⁹

Անգամ եթե նվերի արդյունքում ձեր եկամուտը գերազանցեր եկամտային շեմը մեկ ամսվա համար, դուք կշարունակեիք ստանալ ձեր նպաստները առնվազն մեկ ամսվա համար՝ վերաորակավորում թույլ տալու նպատակով, ինչպես պահանջվում է Սոցիալական ապահովության մասին օրենքի § 14005.37-ով, և եթե ընդունենք, որ նվերի արդյունքում ձեր հաջորդ ամսվա ռեսուրսային սահմանաչափը չեր լրանա, ապա Medi-Cal-ի նպաստները կշարունակվեն վճարվել անփոփոխ կերպով:

Ես ե՞րբ պետք է հայտնեմ Սոցիալական ապահովության վարչությանը կամ վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժնին միանվագ վճարման մասին:

Դուք պետք է վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժնին հայտնեք եկամտի մասին այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:⁵⁰ Օրինակ, եթե դուք վճարումն ստացել եք դեկտեմբերի 5-ին,

⁴⁹ SSI-ի կանոններն ավելի սահմանափակող են այն հարցում, որ անկանոն կամ ոչ հաճախակի լրացուցիչ եկամտի նվազեցումը կիրառվում է, եթե եկամուտը ստացվում է տվյալ եռամսյակում մեկ անգամ, և լրացուցիչ նվազեցում չի արվում, եթե եկամուտը նույն աղբյուրից ստացվում է դրան նախորդող եռամսյակում կամ անգամ այդ եռամսյակից հետո, եթե տարբեր եռամսյակում է: 20 CFR § 416.1124(c)(6). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵⁰ Ապահովության մասին Օրենքի 14005.37(h), C.C.R օրենքի բաժին 22, § 50185(a)(4). – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

ապա վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժնին պետք է հայտնեք դրա մասին մինչև դեկտեմբերի 15-ը:

Նշում. մենք խորհուրդ ենք տալիս ձեր եկամտի (և այն ծախսելու) մասին հայտնել գրավոր և եկամտի մասին հաշվետվությունն անձամբ ներկայացնել վարչաշրջանին: Վերցրե՛ք ձեր ներկայացրած հաշվետվության կրկնօրինակը և խնդրե՛ք, որ դրա վրա կնիքով նշեն ամսաթիվը: Պահե՛ք ձեր ծախսած գումարների անդորրագրերը, քանի որ վարչաշրջանը կարող է պահանջել դրանք որպես ապացույց, որ դուք ծախսել եք դրամը և չեք թաքցրել այն օրինակ ձեր ներքնակի տակ:

Ես ինչու՞ պետք է վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժնին հայտնեմ միանվագ վճարման մասին:

Վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժինը պետք է սահմանի ձեր իրավունակությունը նպաստների համար: Եթե դուք որևէ միանվագ գումար եք ստանում և այն պահում եք հաջորդող ամսվա համար, դրա պատճառով կարող եք գերազանցել հաշվելի եկամտի և/կամ ռեսուրսային սահմանաչափը տվյալ ամսվա համար և դառնալ անիրավունակ Medi-Cal-ի համար կամ տեղափոխվել ABD MN ծրագիր՝ միգուցե և ծախսային մասնաբաժնով: Հետևաբար վարչաշրջանի սոցիալական ապահովության բաժինը ցանկանում է իմանալ, թե ինչպես եք դուք ծախսում գումարը:

Ինչպե՞ս կարող եմ նվազեցնել չկրկնվող միանվագ գումարը:

Տարբերակներից մեկը կարող է լինել այն, որ գումարը ծախսեք այնպիսի բանի վրա, որը կլինի ազատված ռեսուրս: Ազատված ռեսուրսների օրինակներ են տունը, ավտոմեքենան, տնային և անձնական իրերը, անկախ ապրելակերպ ապահովող սարքերն ու իրերը, որոշակի ժամկետով կյանքի ապահովագրությունը, գերեզմանի տեղը կամ թաղման ապահովագրությունը կամ Ինքնուրույնության հասնելուն

օժանդակող ծրագրով (անգլ.՝ Plan to Achieve Self Support (PASS))
խնայած դրամը:⁵¹

Մեկ այլ տարբերակ կարող է լինել դրամի մի մասը կամ այն
ամբողջությամբ խնայելը OBRA Trust կոչվող ծրագրով, օրինակ
ընդհանուր հավատարմագրային հաշիվը, որպեսզի դուք կարողանաք
դրամն օգտագործել ձեր կյանքի որակը բարելավելու համար՝ առանց ձեր
նպաստները կորցնելու:⁵²

Դուք կարող եք ստեղծել Հատուկ կարիքների հավատարմագրային
հաշիվ:⁵³ Հատուկ կարիքների հավատարմագրային հաշիվների մասին
օրենքի փոփոխություններն այժմ հնարավորություն են տալիս
հաշմանդամություն ունեցող շահառուին ստեղծել սեփական
հավատարմագրային հաշիվը՝ ի տարբերություն նախկին պահանջի,
որով հաշմանդամություն ունեցող շահառուի ծնողից,
տատիկ/պապիկից, օրինական խնամակալից կամ դատարանից
պահանջվում էր ստեղծել նման հավատարմագրային հաշիվ:⁵⁴
Հավատարմագրային հաշիվների մասին այս փոփոխությունն ուժի մեջ է
մտել 2016թ. դեկտեմբերի 13-ից և գործում է դրանից հետո:⁵⁵ Կարևոր է

⁵¹ 22 C.C.R. §§ 50418, 50425-50489, 50551.5, [Կալիֆորնիայի Առողջապահության և հումանիտար ծառայությունների գործակալության «Հիմնական գույքային սահմանափակումներ Medi-Cal-ի համար» հրապարակում, 2014թ. ապրիլ, հասանելի է 2018թ. մայիսի 23-ից.](#) – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵²C.C.R օրենքի բաժին 22, § 50489 և դրանից հետո, ACWDL Nos. 95-75 , 06-24. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵³ 22 C.C.R. § 50489.9. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵⁴ ACWDL No. 17-13. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵⁵ *Id.* – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

նշել, որ հավատարմագրային հաշիվը շահառուի համար պետք է ստեղծվի նախքան նրա 65 տարեկան դառնալը:⁵⁶

Այս և մյուս տարբերակների մասին մանրամասն տեղեկատվության համար մենք խորհուրդ ենք տալիս ձեզ կապվել Կալիֆորնիայի Տուն-ինտերնատների բարեփոխումների պաշտպաններ կազմակերպության հետ՝ [CANHR-ի երկարաժամկետ բուժխնամքի արդարադատություն և շահերի ներկայացում](#), որպեսզի ստանաք խորհրդատվություն և ուղղորդում այս թեմաներում մասնագիտացած փաստաբանից:⁵⁷

CalABLE հաշիվների մասին տեղեկատվության համար կարող եք այցելել նաև Կալիֆորնիայի նահանգային գանձապետարանի կայքէջը: Տե՛ս Կալիֆորնիայի նահանգային գանձապետարանի կայքէջը:⁵⁸ Եթե դուք ձեռք եք բերում հաշմանդամություն մինչև 26 տարեկանը, դուք հնարավոր է կարողանաք նախքան ձեր SSI-ի կամ Medi-Cal-ի փոփոխությունը խնայել տարեկան մինչև \$14,000 և մինչև \$100,000 ընդհանուր գումար հարկային արտոնությունների խնայողությունների հաշվին, որը

⁵⁶ 42 U.S.C. § 1396p(d)(4)(A). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵⁷ [Մանրամասն տեղեկատվությունն այստեղ. CANHR երկարաժամկետ բուժխնամքի արդարադատություն և հիվանդների շահերի պաշտպանություն.](#) – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵⁸ [Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս նաև CalAble - Ավելի մեծ ֆինանսական ապահովություն հաշմանդամություն ունեցող անձանց համար ծրագիրը և CalAble ծրագիրը – Հաճախ տրվող հարցեր.](#) – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

կոչվում է ABLE հաշիվ:⁵⁹ Դա նշանակում է, որ եթե դուք գումար եք խնայում ABLE հաշվին, հաշվելի ռեսուրսների սահմանաչափը ձեր դեպքում չի գործի SSI-ի կամ Medi-Cal-ի համար, և դուք հաշվին կունենաք մինչև \$100,000 խնայողություն: Բացի այդ, դուք կարող եք ունենալ և՛ ABLE հաշիվը, և՛ Հատուկ կարիքների հավատարմագրային հաշիվը:

Ձեր ABLE հաշվից կատարվող դուրսգրումները չեն հաշվվում որպես եկամուտ, և դուք կարող եք ձեր ABLE հաշվի դրամն օգտագործել համապատասխան ծախսումների, օրինակ՝ տնային, տրանսպորտային և բժշկական ծախսումների համար:⁶⁰ ABLE հաշվի մեկ այլ առավելությունն այն է, որ դուք կարող եք հաշվից գումար ստանալ, և դա չի հաշվվի որպես ռեսուրս, քանի դեռ գումարը չեք պահում տան հետ չառնչվող հաշմանդամության համար որևէ ծախս կատարելու համար:⁶¹ Օրինակ եթե դուք ձեր հաշվից հանեք \$500 հունիս ամսին, որպեսզի վճարեք սեպտեմբեր ամսին ակնկալվող որևէ նախատեսված բժշկական ծախսի դիմաց, ապա \$500-ը չի հաշվվի որպես ռեսուրս հունիս, հուլիս, օգոստոս կամ սեպտեմբերի ամիսների համար:⁶²

Ի՞նչ է տեղի ունենում, եթե ես ընդգրկված եմ MAGI Medi-Cal ծրագրում և ստանում եմ միանվագ վճարում:

⁵⁹ U.S.C. օրենքի բաժին 26, § 529A, հասանելի է [P.O.M.S.– \(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶⁰ Տե՛ս [P.O.M.S. SI 01130.740\(C\)](#). – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶¹ Տե՛ս [P.O.M.S. SI 01130.740\(C\)\(5\)\(a\)](#). – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶² Տե՛ս [P.O.M.S. SI 01130.740\(C\)\(5\)\(c\)](#). – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Ընդհանուր առմամբ, ըստ IRS-ի կանոնների, MAGI ծրագրով ֆինանսական իրավունակությունը որոշելիս, չհարկվող եկամուտը չի հաշվվում: Դա նշանակում է, որ ցանկացած չհարկվող եկամուտ, օրինակ ժառանգությունը, չի հաշվվում ձեր MAGI եկամուտը հաշվարկելիս:⁶³ Կրթաթոշակները կամ ասպիրանտական դրամաշնորհները, որոնք չեն օգտագործվում ապրուստի ծախսերը հոգալու համար, նվազեցվում են եկամտից:⁶⁴ Ձեր MAGI-ի համար հաշվի առնվող և հաշվի չառնվող գումարների ամբողջական ցանկը տե՛ս Medi-Cal-ի թիվ I 17-09 իրավունակության բաժնի տեղեկատվական նամակում (MEDIL):⁶⁵ Ո՛չ MAGI-ն, ո՛չ էլ Ցածր եկամտով երեխաների թիրախային ծրագիրը չունեն ռեսուրսների/հիմնական միջոցների սահմանաչափ:⁶⁶ Խորհուրդ է տրվում չհայտնել որևէ եկամտի մասին, քանի դեռ այն փաստացիորեն չեք ստացել:

Չարկվող եկամուտը, որն ստացվել է որպես միանվագ վճարում, օրինակ խաղադրույքների կամ վիճակախաղերի շահումները, մրցանակները կամ պարգևավճարները, աշխատողների վերահաշվարկի հետևանքով հետին ամսաթվով կատարված վճարումները, գործազրկության ռեսուրսակտիվ վճարված նպաստները, սոցիալական ապահովության և երկաթուղայինների թոշակի անցնելու ռեսուրսակտիվ նպաստները կամ որևէ համապատասխան կենսաթոշակային ծրագրով մահացածի գործատուի կողմից վճարված միանվագ վճարները, դիտարկվում են որպես եկամուտ միայն դրանք ստացած ամսվա համար:⁶⁷ Այդ առաջին ամսից հետո նշված վճարումներն այլևս չեն համարվի որպես ռեսուրս կամ «հիմնական միջոց»: Եթե դուք ստանում եք հաշմանդամության

⁶³ Տես [Medi-Cal-ի իրավունակության բաժնի թիվ I 17-09](#). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶⁴ 42 C.F.R. § 603(e)(2). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶⁵ MEDIL I 17-09. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶⁶ 42 C.F.R. § 603(g). – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶⁷ C.F.R § օրենքի բաժին 42, 435.603(e)(1), MEDIL I 17-09.- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

թոշակ, որը վճարել էք դուք (ի տարբերություն հաշմանդամության այն թոշակի, որը վճարվել է գործատուի կողմից), այդ եկամուտը չի հաշվվում, քանի որ այն ազատված է եկամտային հարկից: Եթե դուք համամապատասխանում եք IRS կանոններին, որոնք ներկայացված են հետևյալ հղման մեջ - [IHSS/Live-in-provider-Self-Certification Information](#) - ձեր IHSS եկամուտը չի հաշվվում, քանի որ այն ազատված է եկամտային հարկից (սակայն ազատված չէ սոցիալական անվտանգության Medicare-ի հարկերից):

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում! [\[Անցնել հարցումի\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.